ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ԳՀԾՁԲ-21-2/1-1

ք.Երևան 05.05.2021թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Ս. Սահակյանի, ով գործում է ՀՀ պաշտպանության նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, Արտաշես Բաղդասարյան Տիգրանի Ա/Ձ-ն (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն այունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված հինգ աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա առավելագույն ծառայության գինը կազմում է 4 500 000 (չորս միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան 20.12.2021թ.:

Մատուցված ծառայությունների դիմաց վճարումներին իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳ=ՄԳ/ՆԳxԾxՔ, որտեղ՝

ՎԳ-ն պայմանագրով սահմանված առանձին տեսակի ծառայությունների մատուցման դիմաց վճարվող գումարն է.

1-ին՝ չափաբաժին

ՄԳ-ն ընտրված մասնակցի առաջարկած հանրագումարային գինն է՝ 94 890 ՀՀ դրամ.

ՆԳ-ն ծառայության մատուցման համար սահմանված առավելագույն միավոր գների հանրագումարն է՝ 94 890 ՀՀ դրամ.

ՄԳ/ՆԳ- բանաձևով սահմանված գործակից՝ 1

Ծ-ն մատուցված ծառայության առավելագույն միավորի գինն է՝ հավելված 1.1

Ք-ն մատուցված ծառայության քանակն է:

2-րդ՝ չափաբաժին

ՄԳ-ն ընտրված մասնակցի առաջարկած հանրագումարային գինն է՝ 274 440 ՀՀ դրամ.

ՆԳ-ն ծառայության մատուցման համար սահմանված առավելագույն միավոր գների հանրագումարն է՝ 274 440 ՀՀ դրամ.

ՄԳ/ՆԳ- բանաձևով սահմանված գործակից՝ 1

Ծ-ն մատուցված ծառայության առավելագույն միավորի գինն է՝ հավելված 1.2

Ք-ն մատուցված ծառայության քանակն է:

3-րդ՝ չափաբաժին

ՄԳ-ն ընտրված մասնակցի առաջարկած հանրագումարային գինն է՝ 28 600 ՀՀ դրամ.

ՆԳ-ն ծառայության մատուցման համար սահմանված առավելագույն միավոր գների հանրագումարն է՝ 28 600 ՀՀ դրամ.

ՄԳ/ՆԳ- բանաձևով սահմանված գործակից՝ 1

Ծ-ն մատուցված ծառայության առավելագույն միավորի գինն է՝ հավելված 1.3

Ք-ն մատուցված ծառայության քանակն է:

4-րդ՝ չափաբաժին

ՄԳ-ն ընտրված մասնակցի առաջարկած հանրագումարային գինն է՝ 608 850 ՀՀ դրամ.

ՆԳ-ն ծառայության մատուցման համար սահմանված առավելագույն միավոր գների հանրագումարն է՝ 608 850 ՀՀ դրամ.

ՄԳ/ՆԳ- բանաձևով սահմանված գործակից՝ 1

Ծ-ն մատուցված ծառայության առավելագույն միավորի գինն է՝ հավելված 1.4

Ք-ն մատուցված ծառայության քանակն է:

ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու

մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 11 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.13 Պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ՋՈՒ պատրաստության գլխավոր վարչությունը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ պաշտպանության նախարարություն	Ա/Ձ Արտաշես Բաղդասարյան Տիգրանի
ք. Երևան Բագրևանդի 5	ՀՀ, ք. Երևան, Սեբաստիա 23բն.14
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	«Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ 900011144079	Հ/Հ 2050932189441001
ՀՎՀՀ 02522157	ՀՎՀՀ 32530056
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ	
_____	Ա. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ _____

Հավելված N 1
N ԳՀՇՁԲ-21-2/1-1 պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

Հ/Հ	Անվանումը	Տեխնիկական բնութագիրը	Առավելագույն գումար /դրամ/	Գնման ժամանակացույց
1	Վահանակների նորոգում (Ղեկավարման վահանակ ՌՀԿ նորոգում)	Ղեկավարման վահանակ «Ալֆա»-ի փաստացի անսարքությունների նորոգում և անսարք դետալների փոխարինում:	1000000	2021թ-ի 2-րդ, 3-րդ և 4-րդ եռամսյակների ընթացքում ըստ ՊԳՎ հայտերի, բայց ոչ ուշ քան 10.12.2021թ.
2	Վահանակների նորոգում (Ղեկավարման վահանակ «Ալֆա» նորոգում)	Ղեկավարման վահանակ ՌՀԿ-ի փաստացի անսարքությունների նորոգում և անսարք դետալների փոխարինում:	1500000	
3	Էլեկտրական սարքավորումների նորոգում (Լիցքավորման սարքի վերանորոգում)	Լիցքավորման սարքի փաստացի անսարքությունների վերացում, անսարք դետալների փոխարինում և վերանորոգում:	1000000	
4	Էլեկտրական սարքավորումների նորոգում (Տրանսֆորմատորի վերանորոգում)	Տրանսֆորմատորների փաստացի անսարքությունների նորոգում և անսարք հանգույցների փոխարինում:	1000000	

Ծանոթություն:

Նորոգման ընթացքում փոխարինվող սարքավորումները (դետալները) պետք է լինեն նոր և չօգտագործված, ձեռք են բերվում նորոգումն իրականացնող կազմակերպության կողմից: Նորոգումն իրականացվում է ՀՀ ՊԳՎ հայտերի և փաստացի պահանջարկի համաձայն, կազմակերպության արտադրամասում կամ զորամասերի հրաձգարաններում:

Հավելված 1.1

Վահանակների նորոգում (Ղեկավարման վահանակ ՌՀԿ նորոգում)			
Այդ թվում՝			
Հ/հ	Անվանումը	Չ/մ	Գինը
1	Մեկնարկիչի (ТУМБЛЕР ПУСК) փոխարինում	հատ	2200
2	Սեղմակի փոխարինում	հատ	2200
3	Ալեհավաքի փոխարինում	հատ	4400
4	Ալեհավաքի բնիկի փոխարինում	հատ	1100
5	Սնուցման հանգույցի փոխարինում	հատ	1980
6	Մեկ մարտկոցի փոխարինում	հատ	4400
7	Մեկ ռադիոմալուխի փոխարինում	հատ	660
8	Ռադիոմալուխի մեկ միացման հանգույցիփոխարինում	հատ	1100
9	Խմբային փոխանցիչի փոխարինում	հատ	1650
10	Ռելե 12 վոլտ փոխարինում	հատ	2200
11	Մեկ հաղորդալարի փոխարինում	հատ	550
12	Կոնդենսատորի փոխարինում	հատ	770
13	Ինդուկցիոն կոնտուրի փոխարինում	հատ	2200
14	Ռեզիստորի փոխարինում	հատ	770
15	Փոփոխական ռեզիստորի փոխարինում	հատ	1100

16	ԿՏ 368 տրանզիստորի փոխարինում	հատ	2200
17	ԿՏ 315 տրանզիստորի փոխարինում	հատ	1650
18	Ինդուկտիվ կոճի փոխարինում	հատ	880
19	Վարիկապի փոխարինում	հատ	1100
20	ԿՏ 646տրանզիստորի փոխարինում	հատ	2200
21	ԿՏ 920Ա տրանզիստորի փոխարինում	հատ	6600
22	ԿՏ 920Բ տրանզիստորի փոխարինում	հատ	6600
23	ԿՏ 972Ա տրանզիստորի փոխարինում	հատ	2750
24	ՓԻՔ 16Ֆ84 պրոցեսորի փոխարինում	հատ	3300
25	4 ՄՀց ռեզոնատորի փոխարինում	հատ	1650
26	ԿՑ 162 Ա ստաբիլիտրոնի փոխարինում	հատ	1100
27	7805 ստաբիլիզատորի փոխարինում	հատ	2200
28	1015ՊԼ4 սինտեզատորի փոխարինում	հատ	1650
29	Լուսադիոդի փոխարինում	հատ	220
30	Տպագիր պլատայի ուղղում	հատ	550
31	Ռադիոհրահանգների ձևավորման բլոկի փոխարինում	հատ	11000
32	Ռադիոհաղորդիչ բլոկի փոխարինում	հատ	8360
33	Իրանի ներկում	հատ	1100
34	Տումբլեռի փոխարինում	հատ	3300
35	VGA հանգույցի փոխարինում	հատ	7700
36	ՓԻՔ 16Ֆ84 պրոցեսորի ծրագրավորում	հատ	1500
	Ընդամենը՝	94 890	

Հավելված 1.2

Վահանակների նորոգում (Ղեկավարման վահանակ «Ալֆա» նորոգում)			
Այդ թվում՝			
Հ/հ	Անվանումը	Չ/մ	Գինը
1	Սնուցման հանգույցի փոխարինում	հատ	3850
2	Սեղմակի փոխարինում	հատ	3300
3	Տումբլեռի փոխարինում	հատ	3300
4	Խմբային փոխանցիչի փոխարինում	հատ	3300
5	Սնուցման բլոկի փոխարինում	հատ	5500
6	Սնուցման բլոկի նորոգում	հատ	3300
7	Տրանսֆորմատորի փոխարինում	հատ	5500
8	Կառավարման բլոկի փոխարինում	հատ	21450
9	Կառավարման բլոկի նորոգում	հատ	3300
10	Հետադարձ ինֆորմացիայի բլոկի փոխարինում	հատ	13200
11	Հետադարձինֆորմացիայիտպագիրպլատայիուղղում	հատ	1650
12	Գիշերային նմանակման բլոկի փոխարինում	հատ	4950
13	Գիշերային նմանակման բլոկի տպագիր պլատայի ուղղում	հատ	1650
14	Ավտոմատ ռեժիմի բլոկի փոխարինում	հատ	21450
15	Ավտոմատ ռեժիմի բլոկի տպագիր պլատայի ուղղում	հատ	2200
16	Ձայնային ազդարման բլոկի փոխարինում	հատ	17600
17	Ձայնային ազդարման բլոկի տպագիր պլատայի ուղղում	հատ	1650
18	Վայրկյանաչափի բլոկի փոխարինում	հատ	5500
19	Վայրկյանաչափի բլոկի տպագիր պլատայի ուղղում	հատ	1650
20	ՖՊՌ-ի բլոկի փոխարինում	հատ	4400
21	ՖՊՌ-ի բլոկի տպագիր պլատայի ուղղում	հատ	1650
22	Հետադարձ ինֆորմացիայի ցուցիչի փոխարինում	հատ	3300
23	ԿՏ 972 Ա տրանզիստորի փոխարինում	հատ	1650
24	7805 ստաբիլիզատորի փոխարինում	հատ	1650

25	Ռելե 12 վոլտ փոխարինում	հատ	1650
26	ՍԴ 4094 միկրոսխեմայի փոխարինում	հատ	880
27	Դիմադրության փոխարինում	հատ	550
28	ՓԻՔ 16Ֆ84 պրոցեսորի փոխարինում	հատ	3850
29	ՓԻՔ 16Ֆ622 պրոցեսորի փոխարինում	հատ	3850
30	1000 մկֆ կոնդենսատորի փոխարինում	հատ	880
31	47 մկֆ կոնդենսատորի փոխարինում	հատ	880
32	ՏԴԱ 1557 Ք միկրոսխեմայի փոխարինում	հատ	4950
33	ԼՄ 358 ԱՆ միկրոսխեմայի փոխարինում	հատ	1650
34	Կ 561 ԼԱ 7 միկրոսխեմայի փոխարինում	հատ	1650
35	1N 4007 դիոդի փոխարինում	հատ	1100
36	4 ՄՀց ռեզոնատորի փոխարինում	հատ	1650
37	AOS 101 օպտրոնի փոխարինում	հատ	1650
38	Մեկ հաղորդալարի փոխարինում	հատ	550
39	ՌՊ հանգույցի փոխարինում	հատ	2200
40	ՇՌ հանգույցի փոխարինում	հատ	2750
41	Թվային տվիչի փոխարինում	հատ	8800
41	ՓԻՔ 16Ֆ84 պրոցեսորի ծրագրավորում	հատ	1500
42	ՓԻՔ 16Ֆ622 պրոցեսորի ծրագրավորում	հատ	1500
43	ՖՊՌ-ի պատրաստում և տեղադրում	հատ	80000
44	ՖՊՌ-ի սնուցման բլոկի փոխարինում	հատ	15000
Ընդամենը՝		274 440	

Հավելված 1.3

Էլեկտրական սարքավորումների նորոգում (Լիցքավորման սարքի վերանորոգում)			
Այդ թվում՝			
Հ/հ	Անվանումը	Չ/մ	Միավորի գին/դրամ/
1	Սնուցման բլոկի փոխարինում	հատ	5280
2	Կառավարման բլոկի փոխարինում	հատ	7480
3	Սնուցման հանգույցի փոխարինում	հատ	2200
4	Ապահովիչի բնիկի փոխարինում	հատ	1650
5	Ապահովիչի փոխարինում	հատ	550
6	Տումբլերի փոխարինում	հատ	2200
7	Լուսադիոդի փոխարինում	հատ	550
8	Տպագիր պլատայի ուղղում	հատ	550
9	Իրանի փոխարինում	հատ	6490
10	Մեկ հաղորդալարի փոխարինում	հատ	550
11	1N 4007 դիոդի փոխարինում	հատ	1100
	Ընդամենը՝	28 600	

Հավելված 1.4

Էլեկտրական սարքավորումների նորոգում (Տրանսֆորմատորի վերանորոգում)			
Այդ թվում՝			
Հ/հ	Անվանումը	Չ/մ	Միավորի գին/դրամ/
1	ՏՍՋ 380/220,10 ԿՎԱ տրանսֆորմատորի առաջնային փաթույթի փոխարինում	հատ	55000
2	ՏՍՋ 380/220,10 ԿՎԱ տրանսֆորմատորի երկրորդային փաթույթի փոխարինում	հատ	52800
3	ՏՍՋ 380/220, 4 ԿՎԱ տրանսֆորմատորի առաջնային փաթույթի փոխարինում	հատ	29700
4	ՏՍՋ 380/220,4 ԿՎԱ տրանսֆորմատորի երկրորդային փաթույթի փոխարինում	հատ	28050

5	ՏՍՉ 380/220,2,5 ԿՎԱ տրանսֆորմատորի առաջնային փաթույթի փոխարինում	հատ	13200
6	ՏՍՉ 380/220,2,5 ԿՎԱ տրանսֆորմատորի երկրորդային փաթույթի փոխարինում	հատ	19800
7	Միաֆազ 220/127, 4ԿՎԱ տրանսֆորմատորի առաջնային փաթույթի փոխարինում	հատ	30800
8	Միաֆազ 220/127, 4ԿՎԱ տրանսֆորմատորի երկրորդային փաթույթի փոխարինում	հատ	25300
9	Միաֆազ 220/127, 2,5ԿՎԱ տրանսֆորմատորի առաջնային փաթույթի փոխարինում	հատ	19800
10	Միաֆազ 220/127, 2,5ԿՎԱ տրանսֆորմատորի երկրորդային փաթույթի փոխարինում	հատ	14300
11	ՏՍՉ 380/220,10 ԿՎԱ տրանսֆորմատորի փոխարինում	հատ	128700
12	ՏՍՉ 380/220, 4 ԿՎԱ տրանսֆորմատորի փոխարինում	հատ	63800
13	ՏՍՉ 380/220,2,5 ԿՎԱ տրանսֆորմատորի փոխարինում	հատ	44000
14	Միաֆազ 220/127, 4ԿՎԱ տրանսֆորմատորի փոխարինում	հատ	44000
15	Միաֆազ 220/127, 2,5ԿՎԱ տրանսֆորմատորի փոխարինում	հատ	39600
	Ընդամենը՝	608 850	

Հավելված N 2
N ԳՀԾՁԲ-21-2/1-1 պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Գնման առարկայի			Նախատեսվում է ֆինանսավորել 2021թ. ըստ եռամսյակների, բայց ոչ ուշ, քան 20.12.2021թ., ընդ որում՝		
հ/հ	անվանումը	CPV կոդը	2-րդ	3-րդ	4-րդ
1	Վահանակների նորոգում (Ղեկավարման վահանակ ՌՀԿ նորոգում)	50891100/1	350000	700000	1000000
2	Վահանակների նորոգում (Ղեկավարման վահանակ «Ալֆա» նորոգում)	50891100/2	500000	1000000	1500000
3	Էլեկտրական սարքավորումների նորոգում (Լիցքավորման սարքի վերանորոգում)	50891200/1	350000	700000	1000000
4	Էլեկտրական սարքավորումների նորոգում (Տրանսֆորմատորի վերանորոգում)	50891200/2	350000	700000	1000000

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ

ԿԱՏԱՐՈՂ
Ա/Ձ Արտաշես Բաղդասարյան Տիգրանի

Ա. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Հավելված N 3
N ԳՀԾՁԲ-21-2/1-1 պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 3.1
N ԳՀԾՁԲ-21-2/1-1 պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն